

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**  
Բանկային հաշվի /հաշիվների, ցպահանջ հաշիվների / բացման և վարման մասին  
(ֆիզիկական անձանց համար)

թ. \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 200\_\_ թ. թիվ \_\_\_\_\_

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԸ**

1.1 ԲԱՆԿ՝ «ԲՏԱ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն՝ գրանցված ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 22.06.05թ. թիվ 1/396Ա որոշմամբ՝ գրանցման համար 31, գրանցման վկայական թիվ 0497, հասցեն՝

ի դեմս \_\_\_\_\_  
(պաշտոնը)

\_\_\_\_\_ (անունը, ազգանունը)

որը գործում է \_\_\_\_\_  
(կանոնադրության, լիազորագրի

կամ սեփական նախաձեռնության)

հիման վրա:

**1.2. ՀԱՃԱԽՈՐԴ՝**

\_\_\_\_\_ (կազմակերպության անվանումը, կամ ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հայրանունը)

\_\_\_\_\_ (պաշտոնը,

ի դեմս \_\_\_\_\_  
անունը, ազգանունը)

որը գործում է \_\_\_\_\_ հիման վրա:  
կանոնադրության, լիազորագրի կամ սեփական նախաձեռնության

**2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ**

2.1. Բանկը պարտավորվում է Հաճախորդի անունով բացել բանկային հաշիվ /հետագայում՝ հաշիվ կամ հաշիվներ/, այդ հաշվին մուտքագրել Հաճախորդի անունով ստացվող դրամական միջոցները, սահմանված կարգով հաշվից կատարել փոխանցումներ և տալ համապատասխան գումարներ, ինչպես նաև Հաճախորդի կարգադրությամբ /հանձնարարագրով, հայտով/ կատարել այլ գործառնություններ:

2.2. Սույն պայմանագրի հիման վրա Հաճախորդի ցանկությամբ Բանկը կարող է բացել հետևյալ հաշիվները.

- բանկային
- ավանդային /ցպահանջ/
- նպատակային և այլ հաշիվներ

2.3. Սույն պայմանագրով սահմանված կարգով կարող են իրականացվել հետևյալ գործառնությունները.

- Հաճախորդին ակրեդիտիվների /վարկային նամակներ/ տրամադրում
- խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցում
- միջազգային պրակտիկայում ընդունված այլ գործառնություններ

2.4. Հաճախորդը Բանկին վճարում է վերջինիս կողմից մատուցվող բանկային ծառայությունների դիմաց Բանկի սակագներով նախատեսված չափերով միջնորդավճարներ, որոնց տեսակների և չափերի

մասին հաճախորդը իրազեկ է: Պայմանագրի գործողության ընթացքում միջնորդավճարների չափերը փոփոխելու կամ նոր միջնորդավճարներ սահմանելու մասին Բանկն առնվազն 10 օր առաջ հաղորդագրություն է հրապարակում սեփական ինտերնետային էջում, որը Հաճախորդը ճանաչում է որպես պատշաճ իրազեկում:

2.5. Հաշվում եղած դրամական միջոցները տնօրինելու, Հաճախորդի իրավունքը չի կարող սահմանափակվել՝ բացի օրենքով սահմանված կարգով հաշվում եղած դրամական միջոցները արգելադրվելու, հաշվով գործառնությունները դադարեցվելու կամ կողմերի միջև կնքված այլ պայմանագրով նախատեսված լինելու դեպքում, որի մասին Հաճախորդը եռօրյա ժամկետում տեղակացվում է /գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային եղանակով/:

### **3. ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Սույն պայմանագրով Հաճախորդի անունով Բանկում բացվում է դրամային և /կամ արտարժույթային հաշիվ, հաշիվներ/:

3.2 Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից սույն պայմանագրի կնքման կապակցությամբ ներկայացված փաստաթղթերի և դրանցում պարունակող արժանահավատության և հետագայում կատարված փոփոխությունների համար: Փոփոխությունների մասին Հաճախորդը պարտավոր է հայտնել Բանկին և ներկայացնել փոփոխված փաստաթղթերի բնօրինակները, կամ նոտարական կարգով վավերացված կրկնօրինակները: Քանի դեռ հաճախորդը փոփոխությունների մասին չի ներկայացրել պատշաճ փաստաթղթեր, Բանկն առաջնորդվում է Հաճախորդի նախկինում ներկայացրած առկա փաստաթղթերով:

3.3 Բանկը կարող է Հաճախորդին սպասարկել Բանկի և Հաճախորդի միջև կնքված կապի և հաղորդակցության միջոցների օգտագործման մասին համաձայնագրով նախատեսված կապի այլ միջոցներով, ստանալ քաղվածքներ, ինչպես նաև փոխանակել տարբեր տեսակի տեղեկատվական հաղորդագրություններ:

3.4 Բանկային հաշվի համալիր հաշվարկա-դրամարկղային սպասարկումը.

3.4.1 Բանկն իրականացնում է հաշվի /հաշիվների/ համալիր սպասարկումը և Հաճախորդի հանձնարարությամբ այն բոլոր հաշվարկային և դրամարկղային գործառնությունները, որոնք արգելված չեն ՀՀ իրավական ակտերով:

3.4.2 Սույն պայմանագրով նախատեսված հաշվարկային և դրամարկղային գործառնություններն իրականացվում են հաշիվների մնացորդի սահմաններում՝ հաշվի առնելով Բանկի սակագներով սահմանված միջնորդավճարների գումարները:

3.4.3 Հաճախորդի դրամային և բազմարժույթային հաշիվների սպասարկումը կարգավորվում է սույն պայմանագրով և Բանկի կողմից հաստատված Հաշիվների բացման և վարման կարգով:

3.4.4 Հաճախորդի կողմից քաղվածքի ստացման օրվանից 10 օրացույցային օրվա ընթացքում հաշվի մնացորդի ճշտության վիճարկվելու դեպքում Բանկը Հաճախորդի հետ միասին կատարում է փոխադարձ հաշվարկ, իսկ Բանկի մեղքով տեղի ունեցած անճշտության հայտնաբերվելու դեպքում 1 /մեկ/ բանկային օրվա ընթացքում կատարում է ուղղում:

3.4.5 Հաճախորդի բանկային հաշվից միջոցների փոխանցման գործառնական օրը Բանկը սահմանում է ինքնուրույն:

3.4.6 Բանկը վճարման հանձնարարականներով միջոցների փոխանցումները և վճարման հանձնարարականների ակցեպտավորումը, ինչպես նաև վճարման հանձնարարականների կապակցությամբ բազմաբնույթ գործառնություններն իրականացնում է «վճարման հանձնարարականներով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի համապատասխան:

3.5 Հաճախորդի հայտի հիման վրա հաշիվներում առկա դրամական միջոցները կարող են փոխանցվել Բանկում բացված նրա ավանդային հաշվին, ընդ որում.

3.5.1 Հաճախորդը հայտը լրացնում է Բանկի կողմից ավանդների ընդունման պայմաններին և տոկոսադրույքներին համապատասխան, հակառակ դեպքում հայտը ենթակա չէ ընդունման:

3.5.2 Հաճախորդը սույն պայմանագրի հիման վրա, նոր հայտ ներկայացնելու միջոցով կարող է երկարաձգել ավանդի ներգրման ժամկետները, երկարաձգման ձևակերպման օրվա դրությամբ Բանկի սահմանված պայմաններով և տոկոսադրույքներով:

3.5.3 Ավանդի տոկոսի հաշվարկումը կատարվում է ավանդը ավանդային հաշվին մուտքագրվելու հաջորդ օրվանից մինչև գումարը Հաճախորդին վերադարձնելու կամ ավանդային հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվա նախորդ օրը:

3.6 Հաճախորդի հայտերով արտարժույթի առուվաճառքի գործառնություններն իրականացվում են Բանկի կողմից սահմանված փոխարժեքներով և կարգով:

3.7 Սույն պայմանագրով չկարգավորվող բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

#### **4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

4.1 Բանկը պարտավոր է:

4.1.1 Վերսկսել հաշվով կատարվող գործառնությունները Հաճախորդից Հավաստագիրը կամ սույն պայմանագրի 4.2.2 կետում նախատեսված խախտումները վերացնելուն և նույն կետում նշված փաստաթղթերը ստանալուն հաջորդող բանկային օրվանից:

4.1.2 Հաճախորդի կարգադրությամբ՝ երրորդ անձանց պահանջով դրամական միջոցներ դուրս գրել հաշվից, եթե կարգադրության մեջ նշված են անհրաժեշտ տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռնում Բանկին՝ համապատասխան պահանջ ներկայացնելիս նույնացնել նման պահանջի իրավունք ունեցող անձին:

4.1.3 Հաճախորդի հաշվարկա-դրամարկղային փաստաթղթերում հիմնավորված կասկածներ հայտնաբերելու դեպքում անմիջապես կասեցնել գործառնության կատարումը՝ այդ մասին տեղեկացնելով հաճախորդին:

4.1.4 Հաշվի մնացորդի դիմաց Հաճախորդին վճարել տոկոսներ բանկի կողմից սահմանված սակագներով նախատեսված չափով, որը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 5 /հինգ/ օրվա ընթացքում ենթակա է մուտքագրման հաշվին, բացառությամբ սառեցված և նպատակային հաշիվներից /եթե այլ բան նախատեսված չէ առանձին պայմանագրով/:

4.1.5 Բանկի տեսակետից հաշիվներով արտասովոր կամ կասկածելի գործառնություններ կատարելու դեպքում հաճախորդից պահանջել գրավոր կամ բանավոր բացատրություն, ինչպես նաև տվյալ գործառնությունը հիմնավորող փաստաթղթեր /պայմանագիր, հավաստագիր, հաշիվ-ապրանքագիր/ և այլն:

4.2 Բանկն իրավունք ունի.

4.2.1 Հրաժարվել հաճախորդի հանձնարարությամբ հաշվարկային և դրամարկղային գործառնությունների կատարումից, եթե դրանցով խախտվում են ՀՀ իրավական ակտերի պահանջները կամ չեն ներկայացվում տվյալ գործառնության իրականացման համար պահանջվող բավարար և անհրաժեշտ հաշվարկա-դրամարկղային փաստաթղթերը կամ չեն իրականացվում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

4.2.2 Դադարեցնել Հաճախորդի հաշվով իրականացվող բանկային գործառնությունները, եթե հաճախորդը ողջամիտ ժամկետում չի ներկայացնում սույն պայմանագրի 4.1.2 և 4.3.1 կետերում նշված փաստաթղթերը կամ Հաճախորդի բացատրություններն ու ներկայացված փաստաթղթերը գնահատվում են անբավարար:

4.2.3 Հրաժարվել Հաճախորդի հանձնարարությունները կատարելուց, իսկ կատարման ընթացքում գտնվողները դադարեցնել, եթե Հաճախորդի կողմից սխալ է նշվել անվտանգության արարողակարգի մասին նշված կարգով նախատեսված էլեկտրոնային փաստաթղթերի պաշտպանվածության միջոցները /ստուգաբանալիներ, զաղտնագրեր և այլն/:

4.2.4 Առանց համաձայնություն ստանալու կատարել Բանկի և Հաճախորդի հանդիպակաց պահանջների հաշվանց:

4.2.5 ՀՀ գործող օրենսդրության համաձայն, վիճարկել ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները

4.3 Հաճախորդը պարտավոր է.

4.3.1 Տարին մեկ անգամ հավաստել Բանկ ներկայացված փաստաթղթերի և դրանցում պարունակվող տվյալների արժանահավատությունը: Սույն ենթակետում նշված տեղեկությունների ճշտումը կատարվում է Հավաստագիրը կամ Բանկի կողմից մշակված համապատասխան փաստաթուղթը, այսուհետ՝ «Հավաստագիր», առձեռն, փոստով/ այդ թվում՝ էլեկտրոնային/, փոստային առաքումների ծառայությունների միջոցով կամ ֆաքսիմիլային կապով Հաճախորդից ստանալու միջոցով:

4.3.2 Բանկի պահանջով, սույն պայմանագրով և ՀՀ իրավական ակտերով նախատեսված դեպքերում եռօրյա ժամկետում Բանկին տալ բացատրություններ, ներկայացնել պատշաճ փաստաթղթեր և տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ:

4.3.3 Ստուգաբանալիների, գաղտնագրերի ինչպես նաև կազմակերպության կնիքի, չեկային գրքույկի, անձի նույնականացման համար Բանկին ներկայացված փաստաթղթերի կորստի դեպքերում 24 /քսանչորս/ ժամվա ընթացքում անվերապահորեն տեղյակ պահել Բանկին:

4.3.4 Պահպանել ՀՀ իրավական ակտերով և Բանկի ներքին հրահանգներով սահմանված հաշվարկա-դրամարկղային գործառնությունների իրականացման կանոնները:

4.3.5 Բանկին ներկայացվող հաշվարկային և դրամարկղային փաստաթղթերը լրացնել սահմանված ձևին համապատասխան:

4.3.6 Երրորդ անձանց պահանջներով հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու կարգադրություններում նշել բավարար տվյալներ, որոնք հնարավորություն կտան նույնացնել նման պահանջի իրավունք ունեցող անձին:

4.4 Հաճախորդն իրավունք ունի.

4.4.1 Պայմանագրի գործողության ողջ ընթացքում ցանկացած ժամանակ տեղում ծանոթանալ Բանկի կողմից իրականացվող հաշվարկա-դրամարկղային գործառնությունների և այլ բանկային ծառայությունների իրականացման ներբանկային կարգերին և սակագներին:

4.4.2 Սույն պայմանագրի կապակցությամբ Բանկից ստանալ խորհրդատվական և մեթոդական օգնություն:

4.4.3 Ցանկացած ժամանակ միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը 30օր առաջ գրավոր նախազգուշացնելով Բանկին:

4.4.4 Չեղյալ համարել իր կողմից ներկայացված վճարման հանձնարարականը, փոխհատուցելով այդ կապակցությամբ Բանկի կրած ծախսերն ու վնասներն ամբողջությամբ:

4.4.5 Կարգադրել Բանկին իր բանկային հաշվից դրամական միջոցներ դուրս գրել երրորդ անձանց պահանջով՝ կապված այդ անձանց հանդեպ հաճախորդի պարտավորությունների կատարման հետ:

4.4.6. ՀՀ գործող օրենսդրության համաձայն, սույն պայմանագրից բխող պահանջները ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարի քննությանը

## 5. ՀԱՇՎԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Եթե հաճախորդի բանկային հաշվի վրա արգելանք սահմանված չէ և Բանկի նկատմամբ հաճախորդը ունի չմարված ժամկետանց դրամական պարտավորություններ և հաճախորդի բանկային հաշվին դրամական միջոցները մասամբ չեն բավարարում հանձնարարականների կատարման համար, ապա Բանկն ընդունում և կատարում է հանձնարարականները ՀՀ քաղ. օրենսգրքի 923 հոդվածի համաձայն:

5.2 Հաշիվն օրենքով սահմանված կարգով արգելադրված չլինելու պարագայում Բանկն ունի իր նկատմամբ Հաճախորդի չմարված դրամական պարտավորությունների կատարման առաջնահերթության իրավունք:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼԸ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

6.1 Բանկի պահանջով կարող է լուծվել բանկային հաշվի պայմանագիրը հետևյալ դեպքերում.

-երբ հաճախորդի հաշվում պահվող դրամական միջոցների գումարը պակաս է բանկային սակագներով սահմանված նվազագույն չափից, եթե նման գումարը չի վերականգնվել այդ մասին բանկի զգուշացման օրվանից մեկ ամսվա ընթացքում:

-մեկ տարվա ընթացքում տվյալ հաշվով գործառնությունների բացակայության դեպքում, ինչպես նաև ՀՀ գործող օրենսդրության սահմանված պահանջները կատարելուց Հաճախորդի հրաժարվելու կամ անպատշաճ կատարելու դեպքում:

Հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը տրվում է հաճախորդին կամ նրա ցուցումով փոխանցվում է այլ հաշիվ, հաճախորդի համապատասխան գրավոր դիմումն ստանալուց ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում:

6.2 Բանկի կողմից Հաճախորդի բանկային հաշվով գործառնությունները դադարեցնելու դեպքում Հաճախորդի դիմումը՝ սույն պայմանագիրը լուծելու և բանկային հաշիվները փակելու վերաբերյալ, Բանկի կողմից ենթակա են մերժման այնքան ժամանակ մինչև չեն վերանում բանկային հաշվով գործառնությունների համար հիմք ծառայած հանգամանքները:

## 7. ԱՅԼ ԴՐՈՒՅՑՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրը կնքելու փաստով Հաճախորդը տալիս է համաձայնություն, Բանկի կողմից Հաճախորդի վճարման հանձնարարականի գումարից կամ հաշվին մուտքագրված գումարներից, սահմանված սակագներով հաշվարկված ծառայությունների վճարները, ինչպես նաև Բանկի նկատմամբ Հաճախորդի դրամական և այլ գույքային պարտավորությունների մարմանն ուղղված գումարները գանձելու համար: Սույն կետը պայմանագրի գործողության ողջ ժամկետում հանդիսանում է ՀՀ քաղ. օր-ի 922 հոդվածի առաջին կետով նախատեսված Հաճախորդի կողմից Բանկին տրված կարգադրություն:

7.2 Կողմերն իրավունք ունեն փոխհամաձայնությամբ բանկային գործառնությունների առանձին տեսակների համար սահմանել տվյալ պահին Բանկի սակագներից տարբերվող այլ միջոտրդավճարների չափեր:

7.3 Այլ ծառայությունների միջոցով հաշվի կառավարումն իրականացվում է Հայտի հիման վրա հատուկ համաձայնագրերով:

7.4 Պայմանագրի կատարման ընթացքում կողմերի միջև ծագած վիճելի հարցերը ենթական են լուծման ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 8. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅՑՆԵՐ

8.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով: Այն կարող է դադարել ՀՀ իրավական ակտերով և սույն պայմանագրով նախատեսված հիմքերով: Պայմանագիրը կարող է փոփոխվել ՀՀ Քաղ. օր-ի 468 հոդվածով սահմանված կարգով:

8.2. Սույն պայմանագրի շրջանակներում դրամական միջոցների վրա հաշվարկվող ցպահանջ ավանդի սակագները, տուժանքները, հաշվարկման մեթոդները, նաև հաշվի սպասարկումից կամ ավանդային պայմանագրից բխող վեճերի լուծման կարգը, պայմանները և սահմանափակումները և այլ նմանատիպ բնույթի տեղեկատվությունն ամրագրված է սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ում:

8.3 Սույն պայմանագիրը կնքվել է երկու հավասարազոր օրինակով՝ հայերեն և անգլերեն լեզուներով և մեկական օրինակով պահվում է կողմերի մոտ: Մեկնաբանման և տարընթերցումների դեպքում հիմք ընդունվում է հայերեն տարբերակը:

-----  
-----  
-----  
-----

-----  
-----  
-----  
-----